

Գ. Փաստրմաճյանի հաղորդումը ԱՄՆ սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (Հոկտեմբեր, 1919թ.)

Ղանբարյան Ա. Վ.

ավագ գիտաշխատող, պրոֆ, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
vanarmin@mail.ru

Վճռորոշ բառեր՝ Գ. Փաստրմաճյան, ԱՄՆ, Հայաստանի Հանրապետություն, առաքելություն, դիվանագիտություն, ենթահանձնաժողով, օգնություն, զորք, զենք, դաշնակից, համագործակցություն:

Сообщение Г. Пастрмаджяна в подкомитете сенатского Комитета по международным отношениям США (Октябрь, 1919 г.)

Гамбарян А. В.

Старший научный сотрудник, к.и.н, доцент, Институт истории НАН РА (Ереван, Армения)
vanarmin@mail.ru

Аннотация. В конце мая 1919 года в Европу и США направляется гражданская миссия во главе с бывшим премьер-министром Республики Армения О. Качазнуни. Целью данной делегации было обеспечение импорта недостающего в Армении продовольствия и других товаров первой необходимости.

9 октября 1919 года миссия прибывает в Нью-Йорк из Европы. Здесь, в качестве дипломатического представителя Республики Армения, к миссии присоединяется Г. Пастрмаджян.

Для того, чтобы представить проблемы Республики Армения правительству США, 10 октября члены армянской делегации Х. Качазнуни и Г. Пастрмаджян выступили в подкомитете сенатского комитета по международным отношениям, который был созван для обсуждения резолюции сенатора Дж. Ш. Уильямса. Резолюция уполномочивала правительство США осуществить союзническую программу помощи армянам и использовать войска США в Армении.

Соглашаясь со свидетельствами Качазнуни и представленной официальной просьбой о гуманитарной помощи для Республики Армения, Пастрмаджян сосредоточился в основном на политической сфере. Он отмечает, что в сложившейся ситуации большое значение имело не только поставка оружия и боеприпасов, но и присутствие всего лишь нескольких тысяч американских солдат в Армении, что обеспечило бы мир в стране и спасло бы жизни.

Ключевые слова: Г. Пастрмаджян, США, Республика Армения, миссия, дипломатия, подкомитет, помощь, войска, оружие, союзник, сотрудничество.

Statement of G. Pasdermajian to the Subcommittee of the Committee on Foreign Relations United States Senate (October, 1919)

Senior Researcher, Candidate of Sciences in History, Associate Professor,
The Institute of History of NAS RA (Yerevan, Armenia)
vanarmin@mail.ru

Abstract. At the end of May 1919 a civilian mission headed by former Prime Minister of the Republic of Armenia O. Kachaznoui is being sent to Europe and the United States to ensure the import of food and other essential goods that are missing in Armenia.

On October 9, 1919, a delegation arrived in New York from Europe. Here, as the diplomatic representative of the Republic of Armenia, G. Pasdermajian joined the mission.

In order to present the problems of the Republic of Armenia to the US government, on October 10, members of the Armenian delegation H. Kachaznoui and G. Pasdermajian addressed the Subcommittee of the Senate Committee on foreign relations, which was convened to discuss the resolution of Senator J. Sh. Williams. The resolution authorized the US government to implement an allied program of assistance to Armenians and use US troops in Armenia.

Agreeing with Kachaznoui's testimonies and the official request for humanitarian assistance for the Republic of Armenia, Pasdermajian focused mainly on the political sphere. He notes that in the current situation, not only the supply of weapons and ammunition was of great importance, but also the presence of only a few thousand American soldiers in Armenia, which would ensure peace in the country and save lives.

Key words: G. Pasdermajian, USA, Republic of Armenia, mission, diplomacy, subcommittee, assistance, troops, weapons, ally, cooperation.

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը լուրջ փոփոխություններ էր նախատեսում աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Մի շարք պետություններ ծնունդ պիտի առնեին հետպատերազմյան կարգավորումների ընթացքում, որոշներն էլ ձևավորվել էին դեռևս Աշխարհամարտի ժամանակ: Դրանց թվում էր Հայաստանի Հանրապետությունը, որը պատերազմի վերջին ամիսների ընթացքում միջազգային բարդ ու ծանր ռազմաքաղաքական իրավիճակում անում էր հնարավորն ու անհնարինը պահպանելու և վայելելու ձեռքբերած անկախությունը:

1918թ. մայիսից սկսած նորաստեղծ Հայաստանի Հանրապետության արջև ծառացած էին բազմաթիվ և բազմապիսի խնթրներ: Վերջինները՝ թե՛ արտաքին հարաբերությունների և թե՛ ներքին քաղաքականության տարբեր ոլորտներում իրեց լուծման կարևորությամբ ու առաջնահերթությամբ փաստացի հավասարագոր էին:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից էր վերակազմված Հայաստանի համար որևէ Մեծ տերության՝ գերադասելի էր ԱՄՆ-ի հովանավորության ներքո անկախության կամ մանդատի ձեռքբերումը [6, էջ 143, 75]: Հայաստանի ապագա կարգավիճակի կամ քաղաքական սահմանների հարցերը պետք է կարգավորվեին խաղաղության վեհաժողովի կողմից:

Զնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէր հրավիրվել Փարիզի խաղաղ վեհաժողովին, հայերը պատվիրակություններ են ուղարկում Փարիզ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես և արևմտահայության կողմից, գտնելով որ համաշխարհային պատերազմի ընթացքում դաշնակից տերությունների հետ իրենց համագործակցությունը և մատուցած ծառայություններն իրավունք էին վերապահում իրենց համարվելու պատերազմի կողմ: Նշված համոզմունքից ելնելով, ՀՀ կառավարությունը երկրի ներքին քաղաքականության առաջնային խնդիրներից մեկի՝ պարենավորման գործի կարգավորումն ու ապահովումը նույնպես մտադիր էին լուծել դիմելով դաշնակից Մեծ տերությունների՝ ստեղծված հանգամանքներում, մասնավորապես ԱՄՆ-ի օգնության միջոցով: «Երկրին սպառնացող սովի առաջն առնելու համար անհրաժեշտ է դիմում անել համաձայնության պետություններին (մասնավորապես Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին) օտար շուկաներից (մասնավորապես Ամերիկայից) Հայաստան խոշոր քանակությամբ հաց ներմուծելու համար [1, թ. 17; 3, էջ 103-104; 4, էջ 253]: 1919թ. փետրվարի 4-ին

Հյատանի Հանրապետության պառլամենտը որոշեց. «Հանձնարարել վարչապետին ուղևորվել Եվրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Խորհրդի անունից համաձայնության պետությունների և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքներ» [2, թթ. 83-100; 5, էջ 167]:

Մինչ Հայաստանի Հանրապետության նախքին վարչապետ Հովհաննես Քաջազունու առաքելության ժամանումը Փարիզ, վեհաժողովի աշխատանքների ընթացքում աստիճանաբար սկնհայտ էր դարձել, որ ո՛չ դաշնակից պետությունները և ո՛չ էլ ԱՄՆ-ը չէին պատրաստվում քաղաքական վճռականություն դրսևորել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Միայն 1919թ. մայիսի 14-ի նիստում դաշնակիցներն որոշում կայացրեցին Հայաստանի նկատմամբ մանդատը հանձնել ԱՄՆ-ին: Վերջինս, սակայն, որոշակի որևէ պատասխան խնդրի վերաբերյալ չէր տալիս: Ուստիև հայական կողմը որոշում է կայացնում պաշտոնապես և ուղակիորեն դիմել ամերիկյան կառավարությանը՝ հենց ԱՄՆ-ում:

Հայկական խնդրի քաղաքական լուծումներն ապահովելու նպատակով, Փարիզից ԱՄՆ՝ որպես Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ, մեկնում է Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահ Գարեգին Փաստրմանյանը (Արմեն Գարո): Կարճ ժամանակ անց, 1919թ. սեպտեմբերի վերջին քաղաքացիական առաքելությամբ Փարիզից ԱՄՆ է ուղևորվում նաև վարչապետ Հ. Քաջազունու գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակությունը՝ Միացյալ Նահանգներից տնտեսական աջակցություն ստանալու նպատակով:

Երբ 1919թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական առաքելությունը ժամանում է Նյու Յորք [7, էջ 1353; 8, էջ 457; 9, էջ 383; 10, էջ 279; 11, էջ 230] նրան միանում է Գ. Փաստրմանյանը: Հայաստանի Հանրապետության խնդիրներն ամերիկյան կառավարությանը ներկայացնելու համար հայ պատվիրակներն ուղևորվում են Վաշինգտոն: Մինչ ԱՄՆ վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներն ու բանակցությունները, հոկտեմբերի 10-ին ՀՀ պատվիրակության անդամները՝ մասնավորապես Հ. Քաջազունուն և Գ. Փաստրմանյանը վկայությամբ հանդես են գալիս ԱՄՆ սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում: Վերջինս կազմվել էր սենատոր Ջ.Շ.Ուիլյամսի ներկայացրած թիվ 106 բանաձևի շուրջ քննարկումներ անցկացնելու նպատակով 1919 թ. սեպտեմբերի 27-ից - հոկտեմբերի 10-ը:

Չ.Շ.Ուիլյամսի բանաձևը լիազորում էր ԱՄՆ կառավարությանը ստանձնել հայերին օգնելու դաշնակիցների ծրագիրը և օգտագործել ամերիկյան զորքերը Հայաստանում [12, էջ 3; 13, էջ 566]: Նման աջակցությունը ենթադրում էր բաղձալի խաղաղության հաստատումն ու ապահովումը միասնական Հայաստանում: Այս նպատակն էլ ձևավորեց ենթահանձնաժողովի լուսմների խորագիրը՝ «Խաղաղության պահպանումը Հայաստանում» [14, էջ 3-125]:

Ենթահանձնաժողովի չորս նիստերի լուսմներին հանդես եկած տասներեք վկաների շարքում էին ոչ միայն ԱՄՆ տարբեր աստիճանների պետական պաշտոնյաներ, ամերիկյան միսիոներներ, այլև ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչներ և Հայաստանի Հանրապետության՝ վերոնշյալ պատվիրակության երկու ներկայացուցիչ:

Պատվիրակության ղեկավար Հ. Քաջազնունին ողջունելով Ուիլյամսի բանաձևը հակիրճ նշեց, որ համապատասխան ռազմական օժանդակության դեպքում, հայերն իվինակի կլինեն ապահովել իրենց ինքնապաշտպանությունը և քանի որ առաքելության հիմնական նպատակն ԱՄՆ-ի տնտեսական աջակցությունն ստանալն էր, նախքին վարչապետի խոսքը հիմնականում ներկայացնում էր հայ ժողովրդի ազգային, մշակութային, քաղաքական նկարագրի, ավանդի և իրավունքների հետ կապված տեղեկություն [12, էջ 109-111; 15, էջ 254-261]: Նա վստահեցնում էր, որ հայությունը կկարողանան վճարել վերցրած վարկերը՝ դրա երաշխիքներն էին հայի աշխատասիրությունն ու Հայաստանի հարուստ բնական պաշարներները:

Հ. Քաջազնունուն հաջորդեց Գարեգին Փաստրմանյանը՝ ով ներկայացավ ոչ միայն որպես Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ, այլև Փարիզում Ազգային պատվիրակության փոխնախագահ: Համամիտ լինելով Քաջազնունու վկայությունների հետ, Փաստրմանյանն իր շեշտադրումներն կատարեց առավելապես քաղաքական դաշտի վերաբերյալ: Ընդգծելով, որ հայերն ոչ պակաս կարևոր դեր են խաղացել Աշխարհամարտում, քան մյուս՝ դաշնակից ժողովուրդները, նա նշեց, որ զինադադարից հետո, չնայած դաշնակիցների կազմակերպած խաղաղ կարգավորումների, վերջիններիս կողմից՝ բացի սննդի որոշակի օգնությունից Ամերիկայից, որևէ քաղաքական կամ ռազմական օգնություն հայությանը չի ցուցաբերվել՝ ոչ զենք, ոչ զինամթերք չի հատկացվել թշնամիներով շրջապատված հայ ժողովրդին պաշտպանելու համար: Փաստրմանյանը շեշտում է, որ Հայաստանի Հանրապետության հումանիտար օգնության խնդրանքի հետ մեկտեղ, ստեղծված իրավիճակում լուրջ կարևորություն էր ներկայացնում զենքի և

զինամթերքի մատակարարումը և ընդամենը մի քանի հազար ամերիկյան զինվորների ներկայությունը Հայաստանում: Ըստ Փաստրմանյանի ինսամակալ ԱՄՆ-ի փոքրաթիվ զորամիավորումները Բաթումում և Երևանում շատ ցանկալի էին հենց բարոյական ազդեցության համար և վճռական դեր կխաղային լոկ իրենց ֆիզիկական ներկայությամբ, քանի որ մեծ տպավորություն կթողնեին՝ առաջին հերթին Հայաստանի հարևանների վրա:

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի առջև Գարեգին Փաստրմանյանի հաղորդման՝ վկայության անգլերեն տեքստը, որն ընդգրկում է վերջինիս երկխոսությունը ենթահանձնաժողովի անդամներ՝ սենատորներ Ու. Գ. Հարդինգի և Չ. Շ. Ուիլյամսի հետ, մեր կողմից թարգմանվել և ներկայացվում է ստորև՝ իբրև հայերեն լեզվով առաջին հրապարակում:

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀՎԺՈՂՈՎՈՒՄ
ՀԱՅՈՑ ԱՉԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ¹
ԲԺ. Գ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ [12, էջ 111-114]**

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք Ամերիկա ուղարկված ազգային պատվիրակության փոխնախագահն եք, այնպես չէ՞:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Ես Փարիզում տեղակայված Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահն եմ, բայց այժմ ես ժամանել եմ Միացյալ Նահանգներ որպես Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Սկզբնապես ձեզ ուղարկել են Խաղաղության վեհաժողովի՞ն Փարիզում:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, ես ընտրվել եմ որպես Փարիզում Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահ և գործել այդ պաշտոնում իմ այստեղ մնալու ընթացքում: Այժմ ես եկել եմ որպես Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ամերիկայում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Որպես նոր կառավարության նախարար՞:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, սը՛ր, սակայն դեռևս չճանաչված²:

¹ Անկախ այն հանգամանքից, որ իր խոսքի սկզբում Գ. Փաստրմանյանը նշում է՝ և ոչ մեկ անգամ, որ Միացյալ Նահանգներում հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության կառավարության՝ դիվանագիտական ներկայացուցիչ, լուսմների արձանագրություններում նա ներկայացված է որպես Խաղաղության վեհաժողովում Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահ:

² Գ. Փաստրմանյանը նկատի ուներ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որը 1919թ. աշնանը դեռևս չէր ճանաչվել դաշնակից երկրների և ԱՄՆ-ի կողմից:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք ցանկանում եք հայտարարություն անել, թե՛ ուզում եք պարզապես ձեզ հարցեր տրվեն:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Եթե դուք բավականաչափ բարի կգտնվեք հարցեր տալու համար, ես կփորձեմ պատասխանել:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Պարզապես ասեք, թե ի՞նչ գիտեք, ինչն, ըստ ձեզ, օգտակար կլինի հանձնաժողովի համար:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Ես կբացատրեմ մեր իրավիճակը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դա լավագույնը կլինի, ինչ կարելի է անել:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Դուք, իհարկե, գիտեք, որ Հայաստանը շատ կարևոր դեր է խաղացել Մեծ պատերազմում³: Մենք կովեցիներն էինք և հրաժարվեցինք թուրքերին միանալ: Մենք կովեցիներն էինք դաշնակիցների հետ շատ երկրներում և այդ ընթացքում շատ մարդիկ կորցրեցինք: Եթե մենք ընտրեինք գերմանացիներին աջակցելը, մենք որևէ լուրջ կորուստ չէինք ունենալ: Փաստն այն է, որ մենք հրաժարվեցինք թուրքերի և գերմանացիների հետ համագործակցելուց, և կովեցիներ Հայաստանի ազատագրման համար դաշնակիցների կողմից, սակայն զինադադարից հետո իրավիճակը Փարիզում այնպիսին է, որ ոչ մի օգնություն դաշնակիցների կողմից մեզ չի ցուցաբերվել: Մենք գեթ մի հրացան կամ որևէ զինամթերք չենք ստացել մեր ժողովրդին պաշտպանելու համար, և այժմ շրջապատված ենք թշնամական համայնքներով⁴, ովքեր, օգտվելով մեր ինքնապաշտպանության միջոցների հայտնի բացակայությունից, շարունակաբար անհանգստացնում են մեզ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այժմ, մինչ կհեռանաք դրանից, ո՞ր բանակներում են հայերի մեծ մասը կռվել:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Ռուսական բանակներում: Բացի ավելի քան 10 000 կամավորներից, մենք ունեինք 160 000 մարդ ռուսական բանակում: Ես ինքս կռվել եմ որպես կամավոր: Սիրիայում Ֆրանսիական բանակում մենք ունեինք Ֆրանսիական դրոշի ներքո կռվող 5000 հայեր: Ունեինք 1000 հայ կամավորներ Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնում⁵: Հայերն ամենուրեք կռվել են դաշնակիցների հետ: Մենք բնականաբար ակնկալում էինք, որ զինադադարից հետո մենք կստանայինք անհրաժեշտ օգնություն մեր դաշնակիցներից:

Բայց, ինչպես ասացի, մենք բացարձակապես ոչինչ չստացանք նրանցից, բացի սննդի որոշակի օգնությունից Ամերիկայից:

Այժմ այն, ինչ մենք խնդրում ենք Ամերիկայից, ավելի բարոյական և տնտեսական բնույթ ունի, քան միայն ֆիզիկական: Մենք ունենք ռազմական ուժ, որը կարիք ունի սննդի, մատակարարումների և զինամթերքի: Մեզ անհրաժեշտ են միայն մի քանի հազար ամերիկյան զինվորներ՝ իրենց

բարոյական ազդեցության համար: Նրանք երբեք ստիպված չեն լինի կռվել, քանի որ թուրքերը կտեսնեն, որ Ամերիկյան Հայաստանի կողմում է և նրանք չեն կռվի: Մենք օգնություն ենք ցանկանում մեկ կամ երկու տարվա համար, մինչև մենք կազմակերպվենք:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք սպա՞ եք եղել:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, սը՛ր:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Կարծո՞ւմ եք, որ կարող եք ունենալ 300 000⁶ արդյունավետ զինված հայեր, եթե նրանց սարքավորումներ և զինամթերք տրամադրվի:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Մեծ հեշտությամբ, սը՛ր: Մենք կարող էինք ունենալ 67 000-անոց բանակ, բայց այժմ մենք միայն 30 000-անոց բանակի կարիք ունենք:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Երբ ասում եք, որ կարող եիք ունենալ 67 000, նկատի ունեք, որ պետք է նրանց վերցնեք օրորոցից ու գերեզմանից: Դուք պետք է վերցնեք երիտասարդ տղաների և ծերերի՞:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, սը՛ր:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Ինչպես Կոնֆեդերացիա՞ն⁷ արեց, վերցնել օրորոցից և գերեզմանի՞ց:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, սը՛ր:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Բայց դուք կարող եք հավաքել զինվորական տարիքի 30 000 մա՛րդ:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Այսինքն, 30-ից մինչև 45 տարեկա՞ն:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Ո՛չ, 20-ից մինչև 30 կամ 32 տարեկան:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Արդյո՞ք նրանք բավականաչափ վարժված են ռազմական մարտավարությանը:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, և մենք ունենք մեծ թվով սպաներ, ովքեր չորս տարի կռվել են ռուսական բանակներում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այսպիսով, դուք միայն զենքի կարի՞ք ունեք:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Չենքի ու զինամթերքի և որոշ պաշարի, իհարկե, և մի քանի սպաների, եթե հնարավոր է: Մենք ունենք սպաներ, բայց մենք նաև կարիք ունենք, որ ամերիկացիները համագործակցեն մեզ հետ ամեն ինչում: Մենք ունենք հազարավոր զինվորներ, ովքեր եղել են ռուսական բանակում, բայց մենք ուզում ենք որոշ ամերիկյան սպաներ օգնեն մեզ՝ վերակազմավորելու մեր բանակը, հատկապես տեխնիկական բնագավառում:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Իհարկե, հայերը ի՞նչ ելրոպական ազգ են՝ միգրացիայի հետևանքով

³ Խոսքը՝ Առաջին աշխարհամարտի մասին է:

⁴ Բնագրում՝ communities:

⁵ Բնագրում՝ French Foreign Legion:

⁶ Սենատոր Հարդինգի կողմից նշված թիվը՝ 300 000 ակնհայտ վրիպում է՝ կամ վերջինի բանավոր խոսքի ժամանակ թույլ տրված, կամ սղագրողի անուշադրության պատճառով: Հաջորդիվ՝ նրա վկայության ընթացքում մի քանի անգամ նշվում է հայկական զինված ուժերի ցանկայի՝ ռեալ թիվը՝ 30 000:

⁷ Համեմատությունը՝ ԱՄՆ-ի XIX դարի պատմության՝ Քաղաքացիական պատերազմի նույնանման իրադարձությունների հետ է:

Ասիայում տեղավորված: Երբ ես այս առնչությամբ օգտագործում եմ «հին եվրոպական» բառերը, ես չեմ սովորում հայերին, բայց ի հավելումն ցանկացած գորքի, որ դուք ցանկանում եք օգտագործել, միթե չե՞ք ցանկանում նաև որևէ եվրոպական դրոշի վարկը:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Իհարկե, «եվրոպական» ասելով ես ներառում եմ նաև ամերիկացիներին, քանի որ մենք բոլորս եվրոպացի ենք:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այսպիսով դուք ուզո՞ւմ եք որևէ եվրոպական դրոշի վարկը:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դուք գտնում եք, որ միայն շատ փոքր գորքի կարի՞ք ունեք:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, մեր սեփական գորքը վերակազմավորելու համար:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ես ուզում էի ձեզ հարցնել, ոչ որպես մեր դրոշման ակնարկ, այլ ես փորձում եմ հանգել նրան, ինչ հնարավոր է թվում անելու համար. դուք կարծո՞ւմ եք, որ եթե այս երկիրը կարողանար տրամադրել զենք ու զինամթերք և ռազմամթերք, և միաժամանակ գծանավ ուղարկել Բաթում՝ ծովային հետևակայիններով, դա մեծապես կթեթևացներ վիճակն այնտեղ:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Դա կթեթևացներ իրավիճակն ամբողջ Կովկասում, սակայն մինչև ամերիկյան դրոշը չլինի Էրիվանում, Էրիվանում ապրող մարդիկ չեն իմանա, թե ինչ կա Բաթումում: Մեր հարևանները՝ արևելյանները, շատ տպավորվող են:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Մենք կարող ենք ծովայիններին ուղարկել երկրի ներքին շրջաններ, այդ դեպքում:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Սենատոր Հարդինգն ասաց՝ Բաթումում ծովային հետևակին: Անշուշտ նա նկատի ուներ ուղարկել ծովայիններին երկրի ավելի խորքը՝ երկաթուղային գծի երկայնքո՞վ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այո՛, մինչև Էրիվան: Կարծում եք դրա բարոյական ազդեցությունը մե՞ծ կլինե՞ր:

Բժ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո՛, սը՛ր, բարոյական ազդեցությունը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք ցանկանո՞ւմ եք որևէ այլ հարց տալ, Սենատո՞ր:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ո՛չ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք չե՞ք ցանկանում, որ նա ծավալվի այս մանրամասների շուրջ:

Պրն ԲԱՐՏԱՇՅԱՆ. Ո՛չ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 17:
2. ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 83-100:
3. Հայաստանի Ազգային Արխիվ, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2014:
4. **Վրացյան, Ս.** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998:
5. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2010:
6. **Խատիսյան, Ալ.** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:
7. «Կոչնակ Հայաստանի», հկտեմբերի 18, 1919, թիվ 42:
8. **Հովհաննիսյան, Ռ. Գ.** Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920, հ. II, Երևան, 2014;
9. **Hovannisian, R. G.** From Versailles to London, 1919-1920, vol. II, Berkley-Los Angeles-London, 1982;
10. **Օванисян, Р. Г.** Международные отношения Республики Армения 1918-1920, Ереван, 2007, стр. 279;
11. **Махмуриян, Г.** Армения в политике США 1917-1923 гг., Ереван, 1918:
12. Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R. 106; p. 3(այսուհետ՝ Maintenance of Peace in Armenia):
13. **Կիրակոսյան, Ջ.** Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972:
14. Լսումների արձանագրությունը տես՝ Maintenance of Peace in Armenia, p. 3-125; Նույն նյութը հրատարակվել է՝ Armenian Review, 1980, vol. 33, N 4, էջ 441-443; 1981, vol. 34, N 1, p. 46-79; N 2, p. 199-217; N 4, p. 412-427:
15. Հ. Քաջազնունու հաղորդման հայերեն տեքստը տես՝ Ա. Ղամբարյան, Հ. Քաջազնունու հաղորդումը ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919թ.), ՊՀԲ, 2019, N 3, էջ 254-261:

Տճանա/Հանձնվել է՝ 26.11.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 27.11.2020
Принята/Ընդունվել է՝ 30.11.2020